

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար


Տարեկան շրք 10

Վեցամսեայ » 5

ԿԱՆԽԻԿ

20

ՍԱՆԴԻՄ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման

Տարեկան շրք 12

Վեցամսեայ » 6

ԿԱՆԽԻԿ

20

ՍԱՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

Կը հրատարակուի Շաբաթ օրերը : Ծաւ-
նոցման տար 10 Մանկիտ : Երու թիւ ա-
ռաց հրատարակուած թերթը 40 Մանկիտ :
Չհրատարակուած գումարներ եւ չհրատարակուած :

Հասցէ

DIRAN PAPA ZIAN


RUE DRAGOMAN K. STEPAN

(BULGARIE)

VARNA

ԲՈԺԱՆՈՐԴԱԳԻՆ ԳԻՆՏ

Ս Օ Ն Մ Ո Ս Ս



ԱԶԳԱՅԻՆ

Կեդրոնի հիմնական Ուսումնական խոր-
հանգիստը, որ բոլորովին վարժապետներէ կը
բաղկանայ, վարժարանաց դասագիրքերը մի-
օրինակութեան վերածելու համար Վարչու-
թիւնէն ուղած որոշումը ըստ շրջառու
ձեւի. որով դասագիրք յօրինելու մրցումը
վերնալով՝ Ուսումնական խորհրդոյ անդամնե-
րուն եւ անոնց Տեսչական խորհրդոյ անդամնե-
րուն կողմէ յօրինուած կամ յօրինուելիք
գիրքերը պիտի բշտին այսուհետեւ. իսկ
հրատարակին վրայ եղած դասագիրքերը, որոնք
Ուսումնական խորհուրդէն վաւերացուած եւ
յանձնարարուած էին վարժարանաց մէջ
գործածուելու, անոնք ալ պարտաւ ըլլալու
եւ յօրինողներին Եկեղեցւոյ գումար մու-
րալու դատապարտուած են : Ի՞նչ ազդոր
անօրէնութիւններ :

Կրօն, Ժողովն ալ, ներկայացուած խնդ-
րագրէ մը իմանալով որ Ղալաթիոյ Եկեղեցւոյ
Տ. Մեսրոպ եւ Տ. Գարեգին քահանայք իրենց
ապրուստի անբաւականութիւնը յայտնելով

գարման կը խնդրէին, որոշեր է գրել որ ընդհանուր քահանայից վիճակն արդէն դարմանի կարօտ է, ուստի պէտք է սպասեն (անշուշտ անօթի) մինչև որ կարգադրութիւն մը բլլայ այս մասին:

Ըստուած կարօղութիւն տայ այդ քահանաներուն որ անօթի դիմանան:

Վառնայէն Պոլիս վերադարձող բայց տրուած պայմանաժամերուն հակառակ վերադարձին յապաղած ըլլալուն պատճառաւ ոստիկոնութեան դուռը արգելուած 40 աղգայինք Պատրիարքարանի միջոցաւ երաշխաւորութիւններն առնուելով ազատ արձակուած են:

Եգիպտոսէն կը գրեն թէ՝ ասկէց երկու ամիս առաջ վէճ մը ծագած է եղեր Զակարիի աղգայնոց և խպտիններուն միջև՝ այս վերջիններուն կողմէ մեր գերեզմանատան հողին վրայ եղած ոսնձգութեան մը պատճառաւ:

Արդ, տեղւոյն առաջնորդարնին մէկ պաշտօնական յայտարարութենէն կը տեղեկացնէ թէ խնդիրը կարգադրութեան ճամբոր մէջ է եղեր և մեր սեպհականութեան իրաւունքը պաշտպանուած:

ՆԱՄԱԿ ԱՌԻՄԻԱԳՐՈՒԹԻՒՆ

* * * 28 Սեպ.

ԱՆԽԻՂՃ ԱՐԾԱԹՍԻՐՈՒԹԻՒՆ

... Խմբագիր.

ՀԱՅԵԼԻ նախորդ թիւերէն միոյն մէջ գրութիւն մը կարդացի, որ արդար զայրոյթ կը յայտնէր մեր քաղաքը գտնուող գաղթական բժշկի մը այն տարօրինակ ընթացքին

համար, որով գաղթական թշուառ կնոջ մը հիւանդ աղջիկը բնակէ յետոյ պատուած էր զեղագիրը, որովհետեւ հէք մայրը «չորհակալ եմ» ու միայն յայտնած էր երախտագտութիւնը:

Այդ պարուն բժիշկը, որ Պոլսոյ մէջ ծանօթ էր իր արծաթսիրութեամբը, այս անգամ ալ կուգայ իր շահատակութեանց շտրքին վրայ նոր մը ևս աւելցնել: Գաղթական կին մը տղաբերքի տաժանելի երկունքին մատնուած, երբ կը տեսնէ որ մանկաբարձ կնոջ կարողութիւնը չի բաւեր զինքը աղատելու, կը խնդրէ մանկաբարձ կնոջմէն որ երթայ նոյն գաղթական բժշկին և անոր գումար հայցէ իր վրայ:

Մեր պարուն բժիշկը, չենք գիտեր ինչ նկատուածով, նախ կը հաւանի մինչև հիւանդին տունը երթալ, բայց երբ հիւանդը կը տեսնէ, որ երկունքի տաժանքին մէջ կը գալարէր, փոխանակ այս դառնաղէտ տեսարանէն ազդուելու, մէկ նաբօլէոն կը պահանջէ աղքատ կինը ազատելու համար այդ վիճակէն:

Լաց, ողբ և աղաչանք անօգուտ կըլլան ի գութ շարժելու այդ մարդը, որ կը մնայ արձանի մը պէս լուռ և անկարիկիր: Վերջապէս, մանկաբարձ կնոջ բացօրոշ խոստումը միայն կարելի կըլլայ զինքը կակղել և այդ նաբօլէոնը անկէ առնելու պայմանաւ միայն կը հաւանի կատարել հարկ եղած խնամքները:

ՀԱՅԵԼԻ. — Աւելորդ համարելով նաեւ կին մնացեալ մասը հրատարակել, կը հարցնենք այդ տօթօռին թէ, երբ ինք բժշկական վարժարանին շրջանը աւարտեց, ի՞նչ հանգիստաւոր խոստումներու վկայականը առնելու պահուն, «Վիժում» չի կատարել ու չբաւոր հիւանդները ձրիապէս դարմանել, (ասոր համար է որ բժիշկ մը տուրք չի վճարեր կառավարութեան) և այս խոստումը երդմամբ ալ նուիրագործեց, այնպէս չէ: Արդ, երբ տեղացի օտար բժիշկներ այսքան ազնուութեամբ մեր գաղթական

խեղճ ազգակիցները կը գարմանեն, մեղա-
դրելի չէ՞ իր արենակցացը դէմ բռնած այս
ընթացքը:

Պուրկազ, 30 Սեպ.

... Տէր խմբագիր.

Թէև ազգային լրագրաց օժանդակելու
փափաքը միշտ ունիմ, բայց նիւթական կա-
րողութիւնս չի ներելուն, ստիպուած եմ
աստ անդ փնտուել և քսքսուել որպէս զի
թերթ մը գտնեմ և կարդամ:

Աղքատին դպրոցը լրագիրն է, բայց
այն լրագիրները որ բուն ճշմարտութիւնը
երեան հանելով ժողովրդեան սրտին փա-
փաքը կը լրացնեն, ոչ թէ բաժանորդի մը
հաճելի ըլլալու համար ճշմարտութիւնը կը
սքողեն:

Ձեր թերթերը ամեն ատեն միշտ հա-
ճութեամբ կը կարգամ, կը տեսնեմ որ ձեր
լրագրոյն բնաբանը ճշգրտին կը կատարէք:
այո՛, կը հարուածէք մոլութիւնը և կը գո-
վէք առաքինութիւնը: Ամենուրեք կը փնտուեն
ՀԱՅԵՆԻՆ, տեսնելու համար անոր մէջ սրտի
պատկերներ առաքինութեան կամ մոլութեան
գիծերով ծածկուած:

Ուրեմն ՀԱՅԵՆԻՆ պէտք է մեզի. անի-
կայ է որ իրենց խկական գոյներով պիտի
պատկերացնէ բոլոր ընտանեկան և ընկերական
մոլութիւնները, որոցմով աւա՛ղ շաղախուած
է շատերուս կեանքը:

Արգ, կար և զօրութիւն մաղթելով Ձեզ,

Խնամ՝ յարգանք

ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Աղբասանգրիոյ մէջ այս օրերս ինժեռ-
էնձան շատ տարածուած է եղեր, բայց ոչ
փտանգաւոր:

Ռուսճուգէն Նազարէթ Աւետիսեան ըո-
տորագրութեամբ խմբագրութեանս եկած

նամակ մը կըսէ թէ, յիշեալը իւր յօժար
կամքովը ուղեր է տէր Կարապետի եղբօր
աղջկան ձեռքը եւ ոչ թէ ճշման ներքեւ,
եւ թէ 3 տարի է որ իր կինը մեռած է
եղեր:

—o—

Պուրկազի քահանային գէմ Պասրիար-
բարանը զրկուած բողբաջիւրը նկատողու-
թեան չէ առնուէր, տեղւոյն թաղ. խորհրդոյ
կեքովը վաւերացեալ չըլլալուն համար:

Էն կարեւորը մոռնալ:

—o—

Ֆատուլեաճեան խումբը

Շուկայէն զրկուած մասնաւոր նամակ-
ներէ կը տեղեկանանք թէ, Ֆատուլեաճեան
խումբը հոն ալ չէ կրցեր գոհացնել թատե-
րասէր հառարակութիւնը: Դերասանք սկսե-
րն «հա՛ց կ'ուղենք, հա՛ց» պոռալ. ասոր վը-
րայ կ'որոշեն Հէզարկրատ երթալով քանի մը
ներկայացումներ աալու, բայց հոն ալ չկրնա-
լով բան մը ընել, կէս ցրուած վիճակի մէջ կը
վերադառնան ի Շուկա ոտքով:

Խմբին ներասանուհին Ա. առնա վերա-
դարձեր է: Դերասաններէն մէկ բանիներուն
գինով վիճակի մէջ գոսպէչանի կայարանը պը
տըտելին տեսնող ճամբորդներ կան եղեր:

ՎԵՐՔԻՆ ԼՈՒՐ

Կ. Պոլսէ եկող այս օրուան թղթագրով
ստացանք հետեւեալը.

«Խառն ժողովը իր վերջին նիստին մէջ
որոշեր էր աղերսագրով մը խնդրել որ օտաթ
երկիրներէ Պոլիս վերագարցող գաղթականք
շաբաթներով բանտարկուած չի մնան. նոյն
աղերսագիրը այսօր (3 հոկ. ուրբաթ) Պատ-
րիարքը եւ ըլլողի Պալատը կը տանի:



ԽԱՐՈՒԱԾ ԱԿՆՑԻՆ

(ԻՐԱԿԱՆ ԴԵՊԲ Ի Կ. ՊՈԼԻՍ)

ԳԼՈՒԽ Ա.

ԱՍՏԻՐ ԱՂԱՆ

18^{••} ի Ապրիլ ամսոյ մէջ ենք:

Կ. Պոլսոյ Սուլթան համամ կոչուած փողոցը Աշըր էֆենտի խանին տակ սղտիկ խանութի մը մէջ հովանոցափաճառութեամբ կը գրադէր Ակնայ Ապուշէն Չարազ գիւղէն հարուստ բայց կծոտ դասակարգէն Տիւաիւկէնց Աստիւր աղա անունով 40 տարեկան անձ մը:

Այն ատենները Ակնցիներու բազմութիւն մը ի Պոլիս գաղթելով՝ մեծաւ մասամբ սկսեր էին սեղանաւորութեամբ գրադիլ, որուն մէջ մեծ յաջողութիւններ ունեցան, բայց, աւանդ որ շատեր վերջը չը բերին: Մեր Աստիւր աղան ալ շատերուն պէս իր կինը ժողով քովը ձգելէն ետքը, իրեն մէկ հատիկ Ղազիկ (Ղաղարոս) անուն 12 տարեկան տղուն հետ երկու ամիսներէ ի վեր Պոլիս հասած էր, ու թէեւ հովանոցափաճառութիւնը իրեն արհեստ ընտրած էր, ուրկէ շատ բան չէր վաստակէր, բայց իւր գլխաւոր շահու աղբիւրը՝ ճանչնոր քաղաքացիներուն ամսական հարկերին 5—6 տոկոսով փոխ-գրամ տալուն մէջն էր:


Պոլիս գաղթող Ակնցիներուն մեծ մասը բնակութիւննին հաստատած էին ի Գուլու—Չէշմէ. Աստիւր աղան ալ նոյն գիւղը յոյնի մը տան մէկ սենեակը վարձած կը բնակէր և աւտու իրիկուն Ղազիկին հետ ցամաքէն կերթար կուգար իր գործատեղին, բլթին տակէն «Տէր ուղեա՛ զգնացս մեր» տղթըրը մրմուլով ու Նարեկաձիին «Ընկալ քաղցրութեամբ»ը հինգ վեց անգամ կըրկնելով:

2ի մօռնանք ըսել թէ իր քաղաքացիներէն մէկուն 17 տարեկան Գանիկ անուն

աղան քովը առած էր, որ ուտել խմելէն ետքը ամսական 30 դրուշով ցորեկները խանութը և իրիկունները տանը մէջ կը ծառայէր:

Եւ որովհետեւ Աստիւր աղան կ'ուզէր որ զաւակը քիչ շատ կրթութիւն մը առնէ, բայց Գուլու Չէշմէի թաղային վարժարանը ոյն ատենները գոհացուցիչ վիճակ մը չուսենայուն, որոշեր էր Ղազիկը ամէն առտու Ղալաթիոյ թաղային վարժարանը տանիլ ձգել, ուր մեծ մասամբ գաւառացի աղաքներ կը յաճախէին, իրիկուններն ալ վերաբարձին առնելու պայմանաւ. ուստի կիրակի օր մը գացեր Ղալաթիոյ եկեղեցիին Թաշխորհուրդին հետ պէտք եղած կարգադրութիւնը ըրեր էր Ղալիկը նոյն վարժարանը դընելու համար:

Երկուշաբթի առաւօտ կանուխ արթննալով, ըստ իւր սովորութեան գիշերնոցով ու ձերմակ յսկող Սան գլուխը պատուհա-



նին առջեւ նստած, մէկ ձեռքը սուրճին գաւաթը եւ միւսը սիկաւը՝ հետեւեալ խրատը կուտար Ղազիկին, որ հօրը դէմը բարեւրունած կեցած էր:

— Ղազիկ, ետվրում, հըմայեկս քեզ Ղալաթիոյ վարժատիւնը տի դնինք, ֆէն՝ ճահտ ու իգտամ տ'անիս երկրին վարժատիւնին մէջ թահսիլ արած վուսուճնէականութիւնդ թէքմիլ անելու, էվ հայճան, էվ


Փիրենկճէն է՞վ տաճիկճէն է՞վ ինկիլիզճէն
 թահսիլ տի անիս, կիրմէ չըմամ ղինճիրլի
 թախսիմը տի գիննաս, վէ էկէր մէկ սա-
 նիյէին մէջ զարաճիւմէն պուղտիկ մատէթ
 հանելու զատիր էլար իսէ՛ արծաթ տիվիթ
 մը մէշկըդ տի խօթիմ: Աւրժըպիտ աղային
 ձեռքը կու պագնիս վէ զայրէթդ գաթան
 տիրիդ չի տի անիս: Հըմայեկս վուսմունք չի
 գինցողին հաց չի կայ, օղուլ, թէքմիլ սա
 իլիմը թահսիլ արէ ուր՝ կենբանի աղթը
 բարեխօս, տէտէէգ մէրաս մնացած սա մա-
 հուտ դարտակ փորուն կաթնավեր աղուն,
 Մելիքոնին, ալթմըզ պիր սէնէի իլթիլամա-
 թէն զիմմէթն անցած քսանըհինգ բեռան
 մօտ մաթլուպաթնուս պուլաշուխ հիսապը
 թէմըցնիս. ղէօրէ, մեղաւորս արսւգաթի
 բարա չիմ կրնար տալ ուր՝ անոր հախէն
 գամ. աշկըս քեզ առած եիմ:

Ապա, երկու անգամ ուժով ուժով
 սիկառը քաշէլէն ետքը, սենեակին դրանըմէջ
 բարե բռնած կիցող Գանիկին դառնալով շա-
 րունակեց.

— Մէնչուկ, Գանիկ, փորը մենձ վար-
 ժըպիտ աղային ինձնէ բարեւ արէ, թող մեր
 Ղազիկին աղէկ նայի. տակը չինք մնար,
 մուխապէլէ կանինք, արատա հեղ մի բշիյ
 մի չոր թիւթ կու ղրկինք. շէմշիյէն կօյրած
 է իսէ՛ ա՛ռ բեր ուր չինինք: Սա հիյնոցն
 ալ անոր թէսլիմ՝ արէ ուր՝ Ղազիկին գիր-
 քի, թուղթի զալէմի վէ զայրիհիւմ ըմմէն
 պէտքաւորական բանը առնէ, պագի մունա-
 ցածն ալ Ղազիկին հետ թող ղրկէ վէ եա-
 խօտ գալիք շարթուան հաթթալըսէն թէն.
 ղիլ անէ:

Ղազիկ այս հրահանքներն ալ լսելէն
 ետքը հօրը ձեռքը պագաւ, որմէ ցորեկուան
 ճաշին համար 40 փարանոց ձմը առաւ և
 Գանիկին հետ ճամբայ ինկաւ: Եւ հայն օ-
 ղէն սկսաւ Ղալաթիոյ վարժարանը յաճախել:

(Շար.)



ՕՐՈՒԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Զարմանօք լսեցինք թէ Ռուսճուգի մէջ
 օրուան նորութիւնն է եղեր «անպայման կեր-
 պով» բառերը երկու խօսքի մէջ գործածել
 անյարմար տեղը:

Ահա մէկ երկու օրինակներ:

Անցեալները առաջին անգամ Ռուս-
 ճուգն այցելող գաղթական մը էֆէի սրճա-
 րանը կը մտնէ, ուր կը հանդիպի իր վա-
 ղեմի ծանօթներէն մէկուն. այս վերջինը ա-
 նոր ձեռքը թոթուելով կըսէ.

— Օ՛, բարի էք եկեր, Պարոն Ղուկաս,
 անպայման կերպով:

— Շնորհակալ եմ Պարոն Մինաս, կը
 պատասխանէ մարդը զարմանքով:

— Ի՞նչպէս էք անպայման կերպով:

— Հէ՛...

— Աղէ՞կ էք անպայման կերպով:

— Ներեցէք բարեկամ, կըսէ նորեկը
 գլխարկը առնելով, կեցէք որ նախ նօտարի
 մը դիմելով պայմանագիր մը կնքեմ՝ ու յե-
 տոյ գամ ձեզի՝ պատասխանեմ թէ՛ աղէկ եմ
 պայմանաւոր կերպով:

»»

Ուրիշ տեղ մը, երկու հոգի տաքու-
 թեամբ կը խօսակցին.

— Ճշմարիտ է, և անպայման կերպով
 ճշմարիտ պիտի ըլլայ թէ, քաղաքական հո-
 րիւղոնը անպայման կերպով ամպամած է, ու
 անպայման կերպով մթաղնած պիտի մնայ,
 ասկէ զատ, քանի որ մենք անպայման կեր-
 պով յետադէմ ու թշուառ վիճակ մը ու-
 նինք, պէտք է անպայման կերպով գիտնանք
 որ մենք ոչ մի ձեռնարկէ չպիտի օգտուինք

անպայման կերպով:

— Բայց սիրելիս անպայման կերպով ,
ինչո՞ւ չէք նկատեր անպայման կերպով թէ ,
քաղաքական հորիզոնը որքան ատեն մթափ-
նած ձայն անպայման կերպով ընել ինչ որ
հարկ է անպայման կերպով եւ օրինաւոր է
անպայման կերպով . . .

ԲՈԺ . — Ուրեմն կուգ՞ուհի, անպայման
կերպով :

„””

Ախլապիճիք

Քանի մը շաբաթ է ՚ի վեր ալ վառ-
նայի մէջ, մանաւանդ Մուսաղլայի հրապա-
րակին վրայ տարօրինակ բառ մը կը լսուի
շատ բերաններէ .

— Ախլապիճիք , ախլապիճիք :

Այս է օրուան անձախօսը :

Կարեւոր անձնաւորութիւններէ սկսեալ
մինչեւ կոշիկ ներկողները կը գործածեն այս
բառը :

Շատեր իրարու կը հարցնեն թէ ի՞նչ
է այս բառին իմաստը : Բո՛ւրժուի իր հետա-
զօտութեանց անդիւնքը հետեւեալ կերպով
կը տեղեկարգրէ մեզ .

Ախլապիճիք — Է բառ ինչ բուսական , յաղ-
գէ բակլայական , գոյնովն
գեղնական եւ հոտովն սէտէ-
ֆական , զոր հրէայք ճաշա-
կեն յաւուրն շաբաթու , յոր-
ժամ տնկեն զգինին եւ զրօմն:

Բայց զարմանալին սա է որ այս բառը
իր արդի գործածութեամբ բնաւ չի համա-
պատասխաներ իր բուն իմաստին :

Օրինակ :

— Բարեւ ախլապիճիք :

— Հէ՞ .

— Ախլապիճիքը տեսա՞ր :

— Ախլապիճիքը ո՞վ է :

— Քէօմիւրճի ախլապիճիքը :

— Խե՞նդ ես ի՞նչ ես , աղբար , ըսելով

կը մեկնի . խօսակիցն ալ ետեւէն խնդալէն
կը մարի :

„””

Սասունի սրճարանին դրանը առջեւ
երկու երիտասարդներ .

— Եղա՛յր , Բարիզէն ֆիկառօ մը զրկեք
էին , Միհրանին տուի , երկու օր է չի բեւ
րաւ , ինչ ախլապիճիք տղայ է :

— Միհրանը ո՞վ է .

— Ախլապիճիք Միհրանը :

— Առջին անգամ կիմանամ կոր այդ
մականունով Միհրանի մը գոյութիւնը :

— Դուն ալ ի՞նչ ախլապիճիք մամդ ես
եղեր . ախլապիճիք Միհրանը չի ճանչցող
կա՞յ :

— Եղբա՛յր , ո՞վ է :

— Մինչեւ որ քեզի պէս ախլապիճիքին
հասկցնեմ ախլապիճիք Միհրանին ո՞վ ըլլա-
լը , անդին ֆիկառօս ախլապիճիք կըլլայ :

Եւ կը մեկնի : Խօսակիցն ալ բերանը
բաց՝ ետեւէն կը նայի :

Ուրիշ մը :

— Ներէ՛յէ կիտէյօրսըն միւսիւ ախլա-
պիճիք .

—

— Սանա սէյլէյօրըմ , հէ՛յ միւսիւ
Գրարոս .

— Պանա՞ մը սէյլէյօրսըն .

— Էվվէթ , սանա . ախլապիճիք .

Ախլապիճիք նէ՞ օլույօր :

— Նէ՞ պիլիրիմ գարտաշ , շիմտի չօգ-
լարը պիրպիրինէ պէյլէ սէյլէյօր :

— Թիմարանէճիտէ՛ք քէնտի մուափինինէ
“ չէ՛ք զինճիլի ” տէյօր :





Մարդու համար եթէ կայ պարծե-
նալու բան մը՝ առաքինութիւնն է :

Պէտք չէ արտաքին երեւոյթէ դատել
մարդուն բարոյականը :

Դժողաց պարծանաց պսակն՝ իւրեանց
առաքինի եւ աղնիւ որդիք են :

Գիտունն հարուստ է իւր աղքատու-
թեան մէջ :

2. քաւորութիւնը՝ մնութիւն մը չէ :

Կինը գեղեցիկ է՝ երբ ունի սրտի
աղնուութիւն եւ բարի վարք :

Եթէ ամէն մարդ իր կեցածին չափ
բարիք ընէ աշխարհիս մէջ, երբեք գեթաղդ
չգտնուիր :

Այնպիսի մարդ մ'ըլլալու է որ պարզ
մէկ խօսքն իսկ երգում մ'ըլլայ :

Ծերութենէ կը վախճանք, մինչդեռ
սպահով չենք որ պիտի կրնանք անոր հաս-
նիլ :

Եթէ կուզես կնոջ արժանիքը հասկնալ,
մանկիկ մը տուր անոր գիրկը :

Եթե մէկն ըսէ քեզ թէ՛ մարդ կրնայ
հարստանալ աշխատութենէ եւ խնայողու-
թենէ զապ միջոցաւ մը, մի՛ հաւատար :

Մարմնոյ գեղեցկութիւնն ո՛րչափ ալ
հիանալի լինի, չարժեք գեղեցիկ միտքը մը :
Թարգմ.



Քրիստին Թադուհին կ'ըսքանչանար գի-
տելով ճերմակ մարմարէ արձան մը՝ որ կ'նե-
րկայացնէր ճշմարտութիւնը : Կարգինալ մը
մօտենալով կ'ըսէ անոր .

« Օմհնեալ է
Աստուած, ճշմարտութեան ճաշակ ունիք՝ դոր
չեն կրնար կրել շատ մը մեծեր : — Հարկաւ
կ'պատասխանէ Թադուհին, ամէն ճշմարտու-
թիւն մարմարիօնէ չէ :

« Ո՛րչափ գեղեցիկ է ձեր եղբայրը, կ'ը-
սէր օր մը բարեկամ՝ մը գրսուհւայ մը որ
քիչ մը տգեղ էր : » — Այո, Տէր, կ'պա-
տասխանէ գրսուհին . եղբայրս մեր տան
բոլոր գեղեցկութիւնները ժառանգեց, իսկ
ես հարստութիւնը :

ՀԱՆԵԼՈՒԿ

Թիւ 23

Տակաւին լուծուած չէ :

Վայրկենական Տպագրութիւն

ԱՅՅԵՏՈՄՍԻ

100 հատը 2 Թր.ի կը տպագրուի եւ ա-
նոր տուլիսն մէջ կը գտնուի Այցետոմսի գոր-
ծածութեան հրահանգը պարունակող տետրակ
մը, որուն կողքին վրայ այցետոմսին տիրոջ ա-
նունը տպագրուած պիտի ըլլայ : Դիմել խմբա-
գրութեանս : Քաղաքներէ ըլլալիք յանձնարա-
րութեան թղթատարի ծախք 30 սանդիւր
յանձնարարողին վրայ է : Դրամի փոխարէն
Պուլկարական 5, 10 եւ 15 սանդիմնոց նա-
մակագրօջմ՝ կ'ընդունուի : Կանխիկ :

ԱԶԴ

ԼՈՒՍԱՆԿԱՐԶԱՏՈՒՆ

Մարտէն Ասրանի

Հին Գաղարմային Ղիմացը Թի. 218

Այս անգամ եւրոպայէ բերել տուած նոր մէքենաներով ընտիր լուսանկարներ կը պատրաստէ, գոհացուցիչ գինով: Յաճախորդը գոհ պիտի մնան:



ԳՈՒՀԱԿ

Ա. Գ. Ա. Գ. Ա. Յ. Ի

կամ Զուարճայի Բաղդադոյց
Ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց ըզբօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը ծախուի մէկ ֆրանքի, լոյզթատարի ծախքով: Դիմել մեր խմբագրութեան:

ՄԵՔԵՆԱՅԻՑ ԳՈՐԾԱՐԱՆ

եւ Յուլաւսի

(ՊՈՒԼԿԱՐԻՊ)

Գ. Յ. ԲԱՐԹԱՄԵԱՆ և Բ. Է. ԲԱՆԶՈՒԳ

Վառնա Ծրդ Թաղ Ելարդ Թապիա

Ամէն տէսակ մեքենաներու շինութիւն և նորոգութիւն, ջաղացքի թէ՛ շոգիով և թէ՛ պարզ ջուրով գործող մեքենաներ, նաև շոգեմակոյկներ. ջաղացքի վերաբերեալ ամէն տեսակ երկաթ այ գործիքներ, զրամական գասաներ, շէնքերու յատուկ երկաթեղէն-նյւր, տեսակ տեսակ ըհաններ ևայլն ևայլն կը պատրաստուին, Պատ. Յաճախորդը միշտ գոհ մնացած են սոյն գործարանի շինութիւններէն:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԻ

ՆՈՐ ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ

ԿԱՄ

ՀԱՒԱՔԱՆՈՅ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱԶԳ. ԵՐԳԵՐՈՒ

ՄԱՍՆ Ա.

ԴԻՆ 2 ՖՐԱՆԿ

Սոյն երգարանը որուն անհամեր կ'ապասուէր ժամանակէ մ'ի վեր, 216 էջերով, մեծ խնամքով սրբազրուած, բաց ի հին ընտիր երգերէ կը պարունակէ նաև բաղձաթիւնը երգեր:

Փափաքողք պէտք է գիմեն տա Մ. ԽԱԶԿԵԱՆ Արեւելեան տպարան. Զրդ. Ուշտաթ Թիւ 1104 ՎԱՌՆԱ:

Վ' առնույէ գուրս և օտար երկիրներէ պահանջուածներուն խրաքանչիւրին իրոյ պէտք է աւելցնել 20 սանթիմ' իր բաժայի ծախք:

ՏՕՔԹ. Ե ԹՈՎՄԱՍԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել արգոյ հասարակութեան թէ վերագարձած է Սօֆիան և կընդունի հիւանդներ ամէն օր իր տունը ի Պալլա Բարար, առաւօտեան ժամ 10էն 12, իսկ կէս օրէն վերջ 2էն 5: Զորեքշաբթի օրերն կէս օրէն վերջ ժամ 2էն 5 ձրիապէս կը դարմանէ:



ԿԱԼՎԱՆԻՍԹ

Ամեն տեսակ
տպագրական կա-

ղապարներ պատրաստող, նաև անձնական և թէ՛ առևտրական կնիքներ: Սոյն կնիքները որ ըստ վերջին դրութեան պղինձէ կը շինուին, հրապարակի վրայ երեքած քառաչուէ կնիքներէ աւելի զիմացկուն են և գիւրութեամբ կը տպագրուին. գինն ալ քառաչուի գինէն տարբերութիւն չունի: Քաղաքներէ ըլլալիք յանձնարարութիւնք փութով կը կատարուին: Դիմել ի վառնա Զիլինկիրէր փողոց Թիւ 561: Գին գոհացուցիչ:

Отговоренъ редакторъ: Н. Драгулевъ
Печатница «Взаимность» — Варна.